



Գ Լ Ո Բ Ո Ի Մ

Վ Ե Ր Լ Ո Ի Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԱՄՆ - ԻՐԱՆ. ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

3

Փետրվար, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ - Իրան. հնարավոր զարգացումներ	3
Իրանի փոխդեսպան Ա.Ա. Ջոուհարի հետ հանդիպման մասին	7
Иранские экстремисты и американские республиканцы. возвращение на круги своя	9
Նոր տրամաբանություն իրանական զարգացումներում. իրավիճակային վերլուծություն	11
Զարգացումներ պաղեստինյան ինքնավարությունում	16
Почему «anglos» лидируют	20
Իրաքահայ համայնքը՝ նոր մարտահրավերների առջև	28
Можно ли считать иракских шиитов однородной общностью?	32
Южный Кавказ: военно-политическая ситуация в начале года	35
Армянская община Краснодарского края	38
ՄԱԿ զարգացման ծրագիր. «գերակայությունները պետական ծախսերում» 2001-2004թթ.	42

ԱՄՆ - ԻՐԱՆ. ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Արդեն մոտ երեք տասնամյակ տևող ԱՄՆ-Իրան առճակատումը թևակոխում է նոր փուլ, և սպասվող զարգացումները, համաձայն վերլուծաբանական հանրության կարծիքի, կարող են հանգեցնել անգամ աշխարհակարգային բնույթի փոփոխությունների:

Ինչպես հայտնի է, ամերիկյան կողմը հետևողականորեն մեղադրում է Իրանին, թե վերջինս անմիջական օգնություն է ցուցաբերում Իրաքում գործող ահաբեկիչներին: Նման տեղեկատվական քաղաքականությունն ուրվագծում է ԱՄՆ գլխավոր թշնամու՝ Իրանի կերպարը և միաժամանակ Իրաքում ԱՄՆ կրած անհաջողությունների պատասխանատվությունը կարծես փոխանցում է այդ երկրին¹: Տեղեկատվական-հոգեբանական ճնշումն Իրանի վրա արտահայտվում է նաև նրանով, որ ՋԼՄ-ում կարելի է հանդիպել բազմաթիվ տեղեկությունների և վերլուծությունների, թե այս գարնան առաջին ամիսներին ԱՄՆ-ը կարող է օդային (նվազագույնը) հարված հասցնել Իրանին: Սակայն «Իրանի խնդիրը» միայն տեղեկատվական բնույթ չի կրում:

Այսօր հայտնի պաշտոնական և ոչ պաշտոնական տեղեկատվությունը, և որ հիմնական է՝ քաղաքական զարգացումների տրամաբանությունը, վկայում են այն մասին, որ Մերձավոր և Միջին Արևելքին (ՄՄԱ) վերաբերվող ամերիկյան նախկին և ներկա բոլոր ծրագրերը ենթադրում են նվազագույնը Իրանի թեոկրատիկ վարչակարգի տապալում և, հնարավորության պարագայում, անգամ այդ երկրի մասնատում ըստ էթնիկ-կրոնական հատկանիշների: ԱՄՆ-Իրան ռազմական բախման խնդիրն առավել հրատապ դարձավ սկսած 2003 թվականից, երբ օկուպացվեց Իրաքը: Մասնավորապես 2006-ի սկզբին, ինչպես և այսօր, ամերիկյան գարնանային ռազմական հարձակման հնարավորությունը նույնպես աշխուժորեն քննարկվում էր ՋԼՄ-ում և վերլուծական պարբերականներում: Նկատենք, որ նախորդ և այս տարվա իրավիճակների միջև կան ինչպես նմանություններ, այնպես էլ էական տարբերություններ:

Նմանություններն առաջին հերթին վերաբերում են ընդհանուր քաղաքական իրադրությանը և հնարավոր պատերազմի ժամկետներին. իրավիճակն Իրաքում 2006-ին սկզբունքորեն շատ չի տարբերվում նրանից, ինչ կա այսօր, իսկ ժամկետների նմանությունը պայմանավորված է գուտ տեխնիկական-օդերևութաբանական հանգամանքներով. գարնանային ժամանակահատվածն այդ տարածաշրջանում ամենանպաստավորն է օդուժի և թևավոր հրթիռների կիրառման տեսակետից: Սակայն 2006-ին ԱՄՆ հանրապետական վարչակազմը, հաշվի առնելով 2006թ. աշնանը Կոնգրեսի ընտրությունների գործոնը և երկյուղելով, որ իրանյան կամպանիայի հնարավոր անհաջողությունը կհանգեցնի պարտության ընտրություններում, որոշեց չդիմել ռիսկի: Մայիտակ տունը «մեծ պատերազմի» փոխարեն իր դաշնակից Իսրայելի հետ ձեռնարկեց «լոկալ», պատժիչ պատերազմ *Zhqrashyash* կազմակերպության դեմ, որը քաղաքական առումով նույնացվում է Իրանի հետ: Հաշվարկը կատարվել էր՝ ելնելով նրանից, որ հաղթական և արագընթաց ռազմական գործողությունները կբարձրացնեն ԱՄՆ և Իսրայելի վարկը և կցուցադրեն ամերիկյան մերձավորարևելյան ռազմավարության արդյունավետությունը: Սակայն տևական և ոչ միանշանակ արդյունքով ավարտված ռազմական գործողությունները միջազգային հանրության կողմից ընկալվեցին որպես ամերիկացիների հերթական անհաջողություն: Դա իր հերթին նպաստեց այն բանին, որ ընտրություններում ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատներում էլ դեմոկրատները մեծամասնություն նվաճեցին:

*Zhqrashyash*ի դեմ ոչ այնքան հաջող ռազմական գործողությունները որոշ վերլուծաբանների հիմք տվեց մտածելու, որ այդ պատերազմը դեռևս «միջանկյալ» բնույթ էր կրում, և «մեծ պատերազմը» ՄՄԱ-ում, որը պետք է վերջնականապես հստակեցնի իրավիճակը և պատաս-

¹ Հայտնի է, որ Բեն Լադենը և Ալ-Քաիդան կորցրել են «թշնամու կերպարի» իրենց տեղեկատվական գրավչությունը, իսկ այսօր Իրաքում գործող ահաբեկիչները պատկանում են ամենատարաբնույթ կազմակերպությունների, որոնց թիվը, ի լրումն, օրավոր աճում է: Այդպիսով, «թշնամին» Իրաքում անձնավորված չէ, ինչը տեղեկատվական հարթությունում լուրջ թերացում է: Այս ամենի համատեքստում ամերիկացիների կողմից Իրանի «իրաքյան թշնամու կերպարի» ձևավորումը տեղեկատվական-հոգեբանական հատուկ գործողությունների տեսանկյունից հիմնավորված է և շահեկան:

խանի «ով ով է ՄՄԱ տարածաշրջանում» հարցին, դեռևս առջևում է: Կարելի է ենթադրել, որ եթե Իսրայելը (ԱՄՆ-ը) միանշանակ հաղթեր *Հիզրայահին* (Իրանին) այդ «միջանկյալ» պատերազմում, ապա դա գուցե բավարար կլիներ Միացյալ Նահանգներին «իր դեմքը պահպանելու» համար, ինչը, թերևս, կնվազեցներ «մեծ պատերազմի» հավանականությունը:

Միևնույն ժամանակ, 2007թ. իրավիճակը զգալիորեն տարբերվում է նախորդ տարիներից: Այս տարի ԱՄՆ հանրապետական վարչակազմը կաշկանդված չէ ներքաղաքական խնդիրներով, և 2007-ը ամենահարմարն է խոշոր գործողություններ ձեռնարկելու համար: Համաձայն ամերիկյան քաղաքական ավանդույթի՝ «հեռացող» նախագահին իր իրավասությունների վերջին տարում, այսինքն՝ 2008-ին, չի կատարում «անհակադարձելի» քայլեր, որոնք սկզբունքորեն կկաշկանդեն նորընտիր վարչակազմին (անկախ այն բանից՝ նրանք հանրապետականներ են թե դեմոկրատներ) իրագործել սեփական ծրագրերը: Ավելին, տպավորությունն այնպիսին է, որ նախագահական ընտրություններում հանրապետականների հաջողության հասնելու միակ հնարավորությունը հաղթական պատերազմն է ՄՄԱ-ում¹: Միևնույն ժամանակ, խնդիրը ոչ միայն այս կամ այն կուսակցության հաղթանակն է ընտրություններում: Հարցադրումը ենթադրում է ավելի բարձր քաղաքական մակարդակ, քանի որ կարծես թե հենց ՄՄԱ-ում է որոշվում ամերիկյան գլոբալ գերակայության հետագա ճակատագիրը: Մինչդեռ զարգացումներն այդ տարածաշրջանում առայժմ մեծ լավատեսություն չեն ներշնչում ամերիկացիներին:

Այսօր առավել քան նախկինում, լրջացել են Իրանի կողմից նետված մարտահրավերները: Հաջողության հասնելով «միջանկյալ» պատերազմում՝ այդ երկիրը մեծացրել է ազդեցությունը ՄՄԱ-ում և անշեղորեն իրագործում է իր միջուկային ծրագիրը: Դա կարող է փոխել ոչ միայն տարածաշրջանային, այլև գլոբալ ռազմաքաղաքական պատկերը: Նկատենք, որ Իրանը որոշ արևմտյան քաղաքագետների կողմից արդեն այսօր ընկալվում է որպես «տարածաշրջանային գերտերություն»:

Իր հերթին՝ ԱՄՆ շահերի տեսակետից գործընթացներն այդ տարածաշրջանում երկակի մեկնաբանությունների առիթ են տալիս: Հարվածելով Իրաքին և մասնատելով կամային հատկություններով օժտված ղեկավարություն ունեցող արաբական երկիրը՝ ԱՄՆ-ը կարծես թե լուծեց մի շարք ռազմավարական խնդիրներ: Սակայն գուցա հեռու ծագեցին նոր հիմնախնդիրներ: Իրաքյան Քրդստանի հետ կապված հայտնի զարգացումները խարխուլեցին ԱՄՆ և Իսրայելի հարաբերությունները Թուրքիայի հետ, որը նախկինում համարվում էր այդ երկրների հիմնական ռազմավարական գործընկերը:

Քրդստանի փաստացի անկախության ձեռքբերումն իր հերթին նույնպես դժվար է անվերապահորեն հաջող համարել: Քրդերի աջակցությունը Միացյալ Նահանգներին, անշուշտ, լուրջ մարտավարական նշանակություն ունի: Սակայն քրդական գործոնը մշտապես անորոշություն է պարունակում, և երկարաժամկետ հեռանկարում զարգացումները կարող են և նպաստավոր չլինել ԱՄՆ-ի համար:

Իրաքի մասնատումն առաջացրել է նաև մեկ այլ, գուցե և ավելի կարևոր հիմնախնդիր: Շիաների իշխանության գալը զգալիորեն մեծացրել է Իրանի ազդեցությունն այդ երկրում: Այսինքն՝ դեռ վաղ է միանշանակ գնահատական տալ, թե որ սցենարն էր ավելի նպաստավոր ԱՄՆ-ի և Իսրայելի համար. սուննիների իշխանության տակ գտնվող և Իրանի հետ առձակատման մեջ գտնվող միասնական, թե՛ մասնատված, սակայն Իրանի ակնհայտ ազդեցության տակ գտնվող և փաստացի շիական ինքնավարություն ունեցող Իրաքը:

Այսպիսով, ՄՄԱ-ում ամերիկյան ռազմավարությունը, որի հենքում, մասնավորապես, ընկած է տարբեր էթնիկական, կրոնական խմբերի և կազմակերպությունների (օրինակ՝ *Համասի* և *ՖԱԹՀ*-ի) միջև հակամարտությունների հրահրումը², կարելի է երկակի գնահատել: Ակնհայտ է, որ որոշ հարցերում ամերիկացիները հասել են անժխտելի հաջողությունների. այսօր տարածաշրջանում ընթանում են միջէթնիկ և միջկրոնական պատերազմներ (որոնք անհասկանալի պատճառներով անվանվում են քաղաքացիական պատերազմ): Անշուշտ,

¹ 2003թ. իրաքյան պատերազմը ձեռնարկվեց ընտրությունների նախորդ տարում և էապես նպաստեց Ջ.Բուշի վերընտրման գործին:

² Այդ հայեցակարգը կոչվում է ամերիկյան արևելագետ-քաղաքագետ Բեռնարդ Լյուիսի անունով:

նման պատերազմը կազմալուծում է ՄՄԱ-ն, փոշիացնում է մարդկային, քաղաքական և տնտեսական ռեսուրսները և այդպիսով ԱՄՆ-ի կողմից ավելի վերահսկելի դարձնում այդ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական առումով կարևոր տարածաշրջանը: Սակայն վերոնշյալ զարգացումներն առաջացնում են նույնքան կարևոր հիմնախնդիրներ, որոնց լուծումը պահանջում է ոչ պակաս ռեսուրսներ:

Նկատենք նաև, որ կազմալուծմանը զուգահեռ՝ տարածաշրջանում ընթանում են բյուրեղացման գործընթացներ. մասնավորապես 2006թ. պատերազմից հետո տեղի է ունենում իսլամական աշխարհի որոշակի համախմբում և Իրանի՝ որպես ուժի կենտրոնի, ձևավորում:

ՄՄԱ գործընթացներին, ոչ ի նպաստ ԱՄՆ-ի, արձագանքում են նաև այլ աշխարհաքաղաքական դերակատարներ, որոնցից առանձնացնենք Չինաստանը և Ռուսաստանը: Հատկանշական է, որ արդեն ոչ թե առանձին ամերիկյան գործիչների, այլ Միացյալ Նահանգների ՊՆ նախարարի մակարդակով այդ տերությունները, ինչպես և Սառը պատերազմի տարիներին, ընդունվում են որպես հակառակորդներ, որոնց հետ հնարավոր է ռազմական հակամարտություն: Նման հայտարարությունները հիմնավորվում են գործնական քայլերով, որոնցից է Ռուսաստանի արևմտյան և արևելյան սահմանների մոտ հակահրթիռային համակարգերի տեղակայումը, ինչը համապատասխանում է նոր՝ բազմաբևեռ սառը պատերազմի տրամաբանությանը:

Այս ամենի համատեքստում ամենակարևոր և ամենավիճահարույց հարցն այն է, թե արդյոք ԱՄՆ ռեսուրսները կբավականացնեն հաղթելու այս նոր պատերազմում: Աշխարհաքաղաքական «մեծ խաղում» ԱՄՆ հիմնական խաղաթղթերն են համալիր քաղաքականություն վարելու կարողությունը և տեխնոլոգիական-ռազմական, թերևս, բացարձակ գերակայությունը¹: Հատկանշական է, որ ռազմական ոլորտում ԱՄՆ-ը վերջերս իրագործեց վճռական քայլեր: Մասնավորապես որոշում ընդունվեց Իրաք ուղարկել լրացուցիչ 21.500 զինծառայող և Պարսից ծոց տեղափոխել (ի լրումն այնտեղ գտնվող «Էյզենհաուեր» ավիակրի) ավելի քան 70 ինքնաթիռ ունեցող «Ջոն Սթենիս» ավիակիրը և նրան ուղեկցող 5 ռազմանավեր: Վերջապես նախագահ Բուշը դիմեց Կոնգրեսին ռազմական կարիքների համար աննախադեպ մեծ գումարներ (մոտ \$760 մլրդ) տրամադրելու առաջարկությամբ:

Կատարվեցին նաև ուշադրության արժանի կադրային նշանակումներ: Ինչպես հայտնի է, իրաքյան և աֆղանական ռազմական գործողությունների թատերաբեմի պատասխանատուն ԱՄՆ զինված ուժերի Կենտրոնական հրամանատարությունն է (ԿՀ): Վերջերս ԿՀ հրամանատար նշանակվեց Իրանի հանդեպ հարձակողական տրամադրություն ունեցող ծովակալ Ուիլյամ Ֆալոնը, որը փոխարինեց ծագումով լիբանանցի գեներալ Ջոն Աբիգայդին: Նշենք նաև, որ ԱՄՆ նոր ՊՆ նախարար Ռոբերտ Գեյթսի նշանակումը հաճախ մեկնաբանվում է որպես «բազե» Ռամսֆելդին Իրանի հետ բանակցություններ վարելու կողմնակից անձով փոխարինում: Սակայն այս «փոխատեղումը» կարելի է երկակի գնահատել: Գեյթսը մինչև նոր նշանակումը ԿՀՎ տնօրենն էր և, թերևս, լավագույն ձևով է իրագրել ՄՄԱ անցուդարձին: Ամերիկյան ռազմական համակարգը, ինչպես հայտնի է, գործում է գրեթե անխափան, և Ռամսֆելդի խնդիրը Պենտագոնի քաղաքական ուղղորդումն էր: Արևելյան «նրբությունների» մասին պրոֆեսիոնալ մակարդակով տեղեկացված Գեյթսի խնդիրը կարող է լինել ամերիկյան ռազմական մեքենայի՝ մերձավորարևելյան իրողություններին համարժեք և այդպիսով ավելի արդյունավետ կիրառումը:

Փաստերի այս համախումբը վկայում է, որ Միացյալ Նահանգների զինուժը Իրանի դեմ ռազմական գործողություններ սկսելու բարձր պատրաստվածություն է ձեռք բերել: Նույնը կարելի է ասել շարունակաբար նոր զինտեխնիկայի օգտագործմամբ զինավարժություններ անցկացնող Իրանի մասին²: Ստեղծված իրողությունում հնարավոր են հետագա զարգացման մի շարք տարբերակներ և սցենարներ.

1. ԱՄՆ գործողությունները ենթարկվում են «սպառնալիքն ավելի գործուն է, քան նրա իրագործումը» ռազմավարական սկզբունքին և նպատակ ունեն ռազմական-քաղաքա-

¹ Այդ տերության սպառազինության տեխնիկայի և ռազմավարական մտքի մակարդակը բազմապատիկ գերազանցում է ոչ միայն առանձին վերցրած տերությունների, այլև նրանց ընդհանրացված համապատասխան ցուցանիշները:

² Այդ երկիրը ոչ միայն ներկրում է սպառազինություն (ինչպես ռուսաստանյան հակաօդային տակտիկական օպերատիվ հրթիռային (TOP) համակարգերը), այլև ինքն է արտադրում ռազմական նորագույն տեխնիկա. օրինակ՝ Իրանը սկսել է արտադրել ռադարների համար անորսալի (UՅԵԼՍ տեխնոլոգիայով) անօդաչու օդանավեր:

կան և տեղեկատվական-հոգեբանական ճնշումների միջոցով ստիպել Իրանի իշխանություններին որոշակի զիջումների գնալ: Դա թույլ կտա ԱՄՆ-ին պահպանել իր վարկանիշը և գոնե մասնավորապես լուծել տարածաշրջանային խնդիրները:

2. Իրանը չի գնում զիջումների, իսկ ամերիկյան վարչակազմը, ելնելով ներքաղաքական (ճնշումներ դեմոկրատական կուսակցության կողմից), արտաքին քաղաքական (միջազգային հանրության հնարավոր կտրուկ արձագանքը), կամ էլ զուտ ռազմական (իրանական ՇՕՊ համակարգի էֆեկտիվությունը, պատասխան ասիմետրիկ հարվածի, այդ թվում՝ միջուկային զենքի կիրառումով, հնարավորությունը) նկատառումներից, չի գնում ռազմական առճակատման: Դա կարող է ընկալվել որպես ԱՄՆ թուլություն ոչ միայն ՄՄԱ տարածաշրջանում, այլև ԱՄՆ գերակայության մասնավոր կորուստ գլոբալ հարթությունում:
3. ԱՄՆ-ը կարճաժամկետ օդային հարված է հասցնում Իրանին՝ առանց վերջնագրեր ներկայացնելու: Այդ գործողությունները նպատակ չունեն տապալել Իրանի վարչակազմը կամ երկրում միջէթնիկական և միջկրոնական բախումներ հրահրել, այլ լուծում են որոշակի՝ միջուկային օբյեկտների ոչնչացման մարտավարական խնդիր: Նման սցենարը թույլ կտա ԱՄՆ-ին համեմատաբար պատվով լքել տարածաշրջանը և պահպանել իր միջազգային հեղինակության զգալի մասը:
4. ԱՄՆ-ը իրականացնում է «հարավսլավական տարբերակը», երբ օդային հարվածները ժամանակային սահմանափակումներ չունեն և շարունակվում են, մինչև Իրանի կողմից որոշակի վերջնագրի ընդունումը: Երկարատև օդային հարվածները, որոնք զուգորդվում են հատուկ նշանակության գործողություններով, կարող են հանգեցնել միջէթնիկական և միջկրոնական բախումների և, ի վերջո, Իրանի կազմալուծմանն իրաքյան սցենարով: Նման զարգացումը կստեղծի քառսային իրադրություն տարածաշրջանում, որի հետևանքներն էապես կազդեն ոչ միայն տարածաշրջանային, այլև գլոբալ հարթությունում ընթացող գործընթացների վրա:

*Գագիկ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ*

ԻՐԱՆԻ ՓՈԽԴԵՄՊԱՆ Ա.Ա.ՋՈՈՒՀԱՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

2007թ. փետրվարի 14-ին «Նորավանք» ԳԿՀ էր այցելել Հայաստանի Հանրապետությունում Իրանի փոխդեսպան Ալի Աքբար Ջոուհարը:

Փոխդեսպանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին մի շարք հարցեր:

Նախ, Իրանի փոխդեսպանը խոսեց Իրան-Հայաստան արդի հարաբերությունների մասին՝ դրանք բնորոշելով բավական զարգացած, սակայն «զրկված նոր ինովացիոն նախաձեռնություններից»: Մինևույն ժամանակ, փոխդեսպանը կարծիք հայտնեց, որ հայ-իրանական ներկա հարաբերությունների բարձր մակարդակն անցած տարիների ընթացքում ձեռք բերված ռեսուրսի օգտագործման հետևանք է, և այդ իսկ պատճառով հայ-իրանական միջպետական երկխոսությունն իր հետագա զարգացման համար պահանջում է նոր ծրագրեր և նախաձեռնություններ: Այդ ծրագրերի քննարկմանն էր նվիրված հանդիպման հիմնական մասը:

Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցման մասին

Հնարավոր ծրագրերից մեկին՝ Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցմանը, հանդիպման մասնակիցները հատուկ ուշադրություն դարձրին:

Իրանի փոխդեսպանը նշեց, որ կոնկրետ մեկնաբանություններ չի կարող տալ ռուսական «Կոմերսանտ» թերթում հրապարակված նյութին, որում նշված էր Մեղրիում նավթավերամշակման գործարան կառուցելու հնարավորության մասին: Սակայն, մինևույն ժամանակ, փոխդեսպան Ջոուհարը նշեց, որ նավթավերամշակման գործարանի կառուցման հեռանկարների շուրջ հաճախ քննարկումներ են եղել թե՛ Իրանում, թե՛ Հայաստանում, իրանա-հայկական միջպետական հանդիպումներում: Նավթավերամշակման գործարանի կառուցումը կարող է հանդիսանալ հենց այն ինովացիոն ծրագրերից մեկը, որը կարող է նոր շունչ հաղորդել հայ-իրանական հարաբերություններին: Լինելով բավական թանկ նախագիծ՝ այն պահանջում է հատուկ մոտեցում դրա իրագործմանը, սակայն հենց նույն «Կոմերսանտում» նշվում էր, որ ռուսական «Գազպրոմն» է հետաքրքրված նախագծով, ինչը գործարանի, ինչպես նաև Իրանի տարածքում, մինչև հայ-իրանական սահման, նոր երկաթգծի կառուցման ֆինանսավորման հնարավորությունը դարձնում է ավելի բազմակողմանի և հնարավոր: Հարցի քննարկման վերջում Ա.Ջոուհարը նշեց, որ ժամանակին անհավանական էր թվում Իրան-Հայաստան գազատարի կառուցման հեռանկարը, մինչդեռ գազատարի կառուցումն այսօր ավարտին է մոտենում: Այսօր նույնպես անհավանական թվացող նավթավերամշակման գործարանի կառուցման հեռանկարը, համապատասխան հետևողական քայլերի դեպքում, կարող է իրականություն դառնալ: Այս առումով կարևորվեց համապատասխան վերլուծական նյութերի դերը, որոնք կարող են իրանական և հայկական քաղաքական իշխանություններին ավելի համոզիչ ներկայացնել գործարանի և երկաթգծի կառուցման անհրաժեշտությունը:

Հայաստան-ԱՄՆ հարաբերություններ

Շարունակելով Իրան-Հայաստան հարաբերությունների թեման՝ Իրանի փոխդեսպանն ասաց, որ Իրանն ըմբռնումով է մոտենում Հայաստան-ԱՄՆ հարաբերություններին՝ գիտակցելով դրանց հատուկ կարևորությունը և օբյեկտիվ անհրաժեշտությունը Հայաստանի համար: Մինևույն ժամանակ, իրանական կողմը մեկ անգամ չէ, որ ականատես է եղել հայ հասարակության և քաղաքական ընտրանու շրջանակներում ԱՄՆ-ի նկատմամբ տիրող իրական զգացմունքներին, որոնք բավական քննադատական են:

ՇՀԿ դերակատարման բարձրացման մասին

Հանդիպման ընթացքում քննարկվեց նաև Շանհայի համագործակցության կազմակերպության դերակատարման բարձրացման հարցը: Երկուստեք ընդգծվեց, որ կազմակերպությունն ակտիվ դեր է սկսել խաղալ միջազգային անվտանգության ներկա համակարգում, միևնույն ժամանակ՝ տնտեսական համագործակցության ուղղությամբ ՇՀԿ-ն պասիվ է աշխատում: Իրանի փոխդեսպանը նշեց, որ այսօր Իրան-ՇՀԿ համագործակցությունը և Իրանի հնարավոր անդամակցությունը կազմակերպությանն ավելի իրատեսական են դառնում, քանի որ կազմակերպության մեջ ընդգրկված երկու գլոբալ տերությունների՝ Չինաստանի և Ռուսաստանի համագործակցությունը ՇՀԿ-ն դարձնում է իրական ուժի կենտրոն, որի դերը գալիք տարիների ընթացքում աճելու է:

Իրանի դեսպանատուն-«Նորավանք» ԳԿՀ հարաբերություններ

«Նորավանք» ԳԿՀ-ի կողմից ՀՀ հաղորդակցային անվտանգության հիմնախնդիրներին նվիրված մրցույթի անցկացումը բավական լուրջ հետաքրքրություն առաջացրեց իրանական կողմի մոտ: Իրանական դեսպանատունը հանձն առավ մրցույթի մասին տեղեկացնել իրանական առաջատար գիտական և վերլուծական կենտրոններին, որոնք հետաքրքրված կլինեն մրցույթին մասնակցությամբ: Երկուստեք նշվեց, որ նման միջոցառումներն անհրաժեշտ են միջպետական հարաբերությունների զարգացման ինտելեկտուալ սպասարկման համար:

ИРАНСКИЕ ЭКСТРЕМИСТЫ И АМЕРИКАНСКИЕ РЕСПУБЛИКАНЦЫ. ВОЗВРАЩЕНИЕ НА КРУГИ СВОЯ

Празднование годовщины исламской революции в Иране и накал страстей вокруг иранской ядерной программы многих заставили обратиться к историческим событиям далекого – с точки зрения динамики современных международных отношений – прошлого конца 1970-х, начала 1980-х гг. И ничего бы в этом обращении не привлекло особого внимания, если б не определенные примечательные события, непосредственно связанные с нынешними реалиями.

Захват американского посольства в 1979-м и выборы президента США

4 ноября 1979г. около 400 иранских студентов захватывают здание американского посольства в Тегеране и берут под арест 63 сотрудников американского дипломатического представительства. Через 2 дня от Временного правительства Ирана полную и безоговорочную власть над страной получает аятолла Хомейни, который и определяет в течение ближайших 10 лет иранскую внешнюю и внутреннюю политику, закладывая основы первой исламской теократии в мире.

Захват американского посольства пришелся на активную фазу предвыборной кампании в США, в которой все более уверенно начал лидировать представитель республиканской партии Рональд Рейган. После его победы на выборах в американскую прессу, не без участия Израиля, просочилась информация о том, что Рональд Рейган, с помощью своего будущего заместителя **Дж.Буша** (отца нынешнего президента) и офицера национальной разведки **Роберта Гейтса** (нынешнего министра обороны США), вступил в тайные переговоры с режимом Хомейни по поводу одного важного для республиканской партии США вопроса¹: иранское руководство попросило не отпускать американских заложников до конца предвыборной кампании в США, которая, благодаря иранцам, должна была закончиться безоговорочным поражением действующего демократического президента. Взамен Тегерану было обещано, что республиканцы снимут запрет на продажу Ирану техники, а также начнут закупать, как и прежде, иранскую нефть. К чести иранской стороны надо констатировать факт, что Тегеран свои обязательства перед республиканцами выполнил полностью (заложников освободили почти сразу после победы Рейгана), в отличие от республиканцев. В дальнейшем Иран вынужден был прибегнуть к политике захвата граждан США в Ливане для того, чтобы заставить американское руководство начать поставки оружия Ирану в самые трудные моменты ирано-иракской войны.

Война в Ираке и выборы президента США 2008 года

Вышеприведенная историческая справка представляет интерес по ряду причин:

- захват и удержание американских дипломатов в Тегеране оказали беспрецедентное влияние на внутривнутриполитические процессы в США, частично определив исход президентских выборов и победу республиканцев;
- преемственность нынешнего уровня ирано-американских сношений обеспечивается наличием прямо (Роберт Гейтс, Махмуд Ахмадинежад, если он действительно участвовал в захвате американского диппредставительства) или косвенно (республиканская партия в США и ультраконсерваторы-неохомейнисты в Иране) вовлеченных в процесс выяснения отношений ИРИ-США лиц и сил;
- наличие все той же иракской проблемы в отношениях между двумя странами,

¹ По расследованию переговоров республиканцы-Иран были организованы слушания в Конгрессе США, которые к конкретным санкциям не привели. *Более подробно на эту тему см.:* Владимир Иванов – Новый иракский воитель Буша // НВО, 17.11.2006.

- предстоящие президентские выборы в США, в которых, однако, перед республиканцами на сей раз стоит задача сохранить, а не заполучить власть.

Парадоксальным образом, как и 28 лет назад, исход президентских выборов в США значительным образом зависит от позиции и политики иранского руководства. Основная разница в ситуации заключается в том, что вместо 63 сотрудников американского диппредставительства в Тегеране в заложниках иранских властей оказалась военная группировка США в Ираке и вся американская ближневосточная политика. Во многом благодаря иранской стороне сегодня терпит частичный крах американская ближневосточная стратегия: развитие ситуации в Ираке выходит из-под контроля, что и заставляет многих традиционных региональных партнеров США призадуматься о вечности и неуязвимости своего основного союзника и все чаще и чаще принимать у себя высокопоставленных лиц из Пекина и Москвы. Все это, вкупе с многочисленными трупами американских солдат и сообщениями о все большем количестве поражаемой повстанческими ракетами американской технике, видят и оценивают также и в американском обществе, которое через год должно определиться с выбором: с кем оно хочет связать свое будущее как минимум в течение предстоящих после 2008-го года 4 лет.

Иракская (на сегодняшний день косвенно – иранская) проблема станет ключевым фактором, который повлияет на исход президентских выборов в США. Хотя многие считают победу демократов безальтернативной, но все же немало зависит от хода ирано-американских отношений. Пойдет ли республиканская администрация США на открытое военное столкновение с Ираном или не пойдет – ключевой элемент, могущий реально повлиять на президентские перспективы двух американских партий. Возвращение Роберта Гейтса в большую политику и реанимация обещаний расправиться с Ираном или серьезно договориться с ним очевидным образом напоминают тактику республиканцев 28-летней давности (именно так себя позиционировал во время президентской кампании Рейган, который в отношении Ирана обещал прибегнуть к политике «кнута и пряника»). С иранской стороны американцам «потокает» другой «реаниматолог» прошлого – Махмуд Ахмадинежад, вернувшийся к антиизраильской, антиамериканской риторике периода раннего послереволюционного развития Ирана.

Однако в положении США и Ирана есть одна существенная разница: иранцам в свете ликвидации саддамовского Ирака больше не нужна военно-техническая и любая иная поддержка США, – Иран реально создает ядерное оружие и пока не особо реагирует на требования отпустить нынешних американских заложников; в Вашингтоне же на самом вершине сидит не реалист и крупный стратег Рейган, а одержимый не всем до конца понятными миссионерскими идеями Дж. Буш-младший. А это может вывести отношения между Вашингтоном и Тегераном на совершенно другой уровень. Хотя может получиться и так, что через 28 лет иранцы «вернут» власть в США демократам, которую в свое время они так помогли отнять.

*Севак Саруханян
Фонд «Нораванк»*

ՆՈՐ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թեև իրանական կողմի մերժումը՝ փետրվարի 21-ի դրությամբ դադարեցնել ուրանի հարստացման աշխատանքները (ինչպես պահանջում է 2006թ. դեկտեմբերի 23-ին ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից ընդունված բանաձևը), ինքնըստինքյան բարդացնում է իրավիճակը, սակայն իրադրության սրացումն այս անգամ, ըստ ամենայնի, կունենա ավելի հիմնարար բնույթ:

Ի տարբերություն վերջին 4-5 տարիների, իրանական միջուկային ծրագրի շուրջ առկա զարգացումներում տեղի է ունենում տրամաբանության փոփոխություն, որի առնչությամբ անհրաժեշտ ենք համարում առանձնացնել երկու հանգամանք.

- Իրանի հաջողությունները միջուկային մշակումներում կրճատում են իրավիճակի վրա ազդելու ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների հնարավորությունները,
- այդ միտումը պահպանվելու դեպքում ժամանակն աշխատում է ի վնաս վերջիններիս:

Չնայած ամերիկյան քաղաքականության անհաջողություններն Իրաքում 2006թ. վերջից թույլ տվեցին խոսել Վաշինգտոնի ու նրա դաշնակիցների մերձավորարևելյան ռազմավարության առաջիկա փոփոխության մասին, բայց ի հայտ են եկել մի շարք ցուցիչներ, որոնք, մասնավորապես՝ իրանական հարցի առնչությամբ, հիմք են տալիս ենթադրել, որ առաջիկա զարգացումներն այդ ուղղությամբ միայն սրվելու են:

Ուղղակի ցուցիչներ

Տարածված կարծիքին հակառակ, ԱՄՆ Կոնգրեսի 2006թ. նոյեմբերի 7-ի միջանկյալ ընտրությունների արդյունքներն էական որևիցե ազդեցություն չեն թողել ԱՄՆ մերձավորարևելյան ռազմավարության վրա:

Փետրվարի 5-ին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ-կրտսերը Միացյալ Նահանգների Կոնգրես ուղարկեց 2008թ. ֆինանսական տարվա (սկսվում է 2007թ. հոկտեմբերի 1-ից) պետական բյուջեի նախագիծը: \$2.9 տրիլիոնի հասնող բյուջեում պաշտպանության համար նախատեսված ծախսերը կազմում են \$481.4 մլրդ, բացի այդ, Իրաքում ու Աֆղանստանում ռազմական գործողություններ վարելու համար առանձնացված են \$93.4 մլրդ 2007թ., \$141.7 մլրդ՝ 2008թ. և \$50 մլրդ 2009թ. համար: Փաստորեն, Կոնգրեսի հավանության դեպքում 2008թ. ֆինանսական տարվա բյուջեում ԱՄՆ ռազմական ծախսերն, ընդհանուր առմամբ, կկազմեն \$766.5 մլրդ¹:

Ոչ պակաս կարևոր էր ամերիկյան ռազմուժի Կենտրոնական հրամանատարության (*CENTCOM*) առանցքային դեմքերի փոփոխությունը: Միացյալ Նահանգների նախագահի 2007թ. հունվարի 5-ի հրամանագրերով *CENTCOM*-ի հրամանատար Ջոն Աբիզեյդը և Իրաքում գործող ԱՄՆ ռազմուժի հրամանատար Ջորջ Քեյսին փոխարինվեցին, համապատասխանաբար, ԱՄՆ ռազմուժի Խաղաղօվկիանոսյան հրամանատարության (*PACOM*) ղեկավար, ծովակալ Ուիլյամ Ֆելոնով ու գեներալ Դևիդ Փեթրեուսով, ով 2004թ. պատասխանատու էր իրաքյան զինուժի ու անվտանգության մարմինների վարժեցման համար: ԱՄՆ Սենատը հունվարի 26-ին հաստատեց Դ.Փեթրեուսի, իսկ փետրվարի 7-ին՝ Ու.Ֆելոնի նշանակումները: Նշենք, որ մինչև հաստատումը հայտնի էր, որ, օրինակ, գեներալ Դևիդ Փեթրեուսը Իրաքում պետք է իրականացնի Բուշ-կրտսերի՝ հունվարի 11-ին հրապարակված իրաքյան նոր ռազ-

¹ Ի դեպ, ըստ այդ բյուջեի, նախատեսվում է 2011թ. դրությամբ ԱՄՆ ծովային հետևակայինների թիվը 175 հազարից հասցնել 202 հազարի, 2012թ. դրությամբ ԱՄՆ ցամաքային զորքերի թիվը 482 հազարից հասցնել 547 հազարի և վերջապես 2013թ. դրությամբ 13 հազարով ավելացնել հատուկ նշանակության ուժերի թիվը:

մավարությունը, որի բաղկացուցիչ մասերից մեկն էլ Իրաքում տեղակայված ամերիկյան շուրջ 140 հազարանոց ռազմուժը մոտ 20 հազարով ավելացնելն է:

Քիչ հավանական է, որ ամերիկյան օրենսդիր մարմինը ռազմական ոլորտին առնչվող ծախսումների հատվածում կատարի էական փոփոխություններ: Այսինքն՝ ԱՄՆ նախագահի ներկայացրած բյուջեի նախագիծն իրականում ներկայացնում է այդ թվում մերձավորանեյյան զրագացումների վերաբերյալ ամերիկյան վերնախավում ձեռք բերված փոխհամաձայնությունը և այդ փոխհամաձայնության մոտավոր պատկերը, և չի կարող ընկալվել որպես միայն Սպիտակ տան հանրապետական վարչակազմի նախաձեռնություն: Հետևաբար, Կոնգրեսի 2006թ. նոյեմբերի միջանկյալ ընտրությունների արդյունքում Ներկայացուցիչների տանն ու Սենատում մեծամասնություն նվաճած դեմոկրատների կամպանիան ընդդեմ Բուշ-կրտսերի իրաքյան ռազմավարության մի մեծ մասով ունի դեկլարատիվ բնույթ¹:

Հաջորդ կարևոր ցուցիչը Իրաքում իրավիճակի զգալի սրացումը և տարածաշրջանում ամերիկյան ռազմուժի շարունակվող համալրումն է:

2006թ. դեկտեմբերի 25-ին Բաղդադում, 2007թ. հունվարի 11-ին հյուսիսիրաքյան Էրբիլ քաղաքում ամերիկյան զինվորականների կողմից ձեռքակալվեցին, ընդհանուր առմամբ, իրանցի յոթ դիվանագետներ: Թեև նրանցից երեքը հետագայում ազատ արձակվեցին, սակայն փետրվարի 6-ին Բաղդադում անհայտ անձանց կողմից առևանգվեց Իրանի դեսպանատան երկրորդ քարտուղար Ջալալ Շարաֆին: Պաշտոնական Թեհրանը մեղադրեց ԱՄՆ-ին Շարաֆիի առևանգման մեջ²:

Գրեթե նույն ժամանակահատվածում՝ 2007թ. հունվարի 22 - փետրվարի 8, իրաքյան զինյալները ոչնչացրին ամերիկյան ռազմական 6 ուղղաթիռներ: Պենտագոնի ներկայացուցիչների մեկնաբանությամբ՝ նմանատիպ նոր գրոհներն ամերիկյան ուժերի դեմ անհնար կլիներին առանց իրանական կողմի ռազմատեխնիկական աջակցության³:

Չի կարող երկրորդական դիտարկվել այն հանգամանքը, որ ամերիկա-իրանական հարաբերությունները սրվում են (այդ թվում ամերիկացիների նախաձեռնությամբ) այն կետում, որը համարվում է ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականության ամենազգայուն մասը: Ժամանակին՝ 2006թ. մայիս-հունիսին, իրավիճակի որոշակի կայունացումն Իրաքում թույլ տվեց խոսել ամերիկա-իրանական պայմանավորվածության մասին:

Պատկերը կարելի է ամբողջական համարել՝ առանձնացնելով տարածաշրջանում ընթացող ամերիկյան ռազմուժի համալրումը⁴ և Իրանի նկատմամբ տեղեկատվական ճնշման կիրառումը⁵:

Երրորդ ցուցիչը. 2006թ. դեկտեմբերի 12-ին Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերտը բառացիորեն հայտարարեց հետևյալը. «Իրանը ցանկանում է տիրապետել միջուկային զենքին,

¹ Պետք է նույն տրամաբանության ներքո ընկալել ԱՄՆ Ներկայացուցիչների տան կողմից 2007թ. փետրվարի 16-ին ընդունված հայտնի բանաձևը, որն անվստահություն է հայտնում Բուշ-կրտսերի իրաքյան ռազմավարության առնչությանը:

² Աչքի է զարնում այն հանգամանքը, որ ժամանակային առումով այդ իրադարձությունների հետ համընկավ ամերիկյան «*The Washington Post*»-ի 2007թ. հունվարի 26-ի հրապարակումը, թե Սպիտակ տունը թույլատրել է Իրաքում տեղակայված ամերիկյան զինվորականներին գերեզմարել կամ ոչնչացնել «իրանական գործակալներին»:

³ Ամերիկյան ռազմական հետախուզության ներկայացմամբ, իրանական հատուկ ծառայությունների գծով իրաքյան զինյալներին է փոխանցվում հակաօդային ու այլ տիպի հրթիռների մեծ քանակություն:

⁴ Հայտնի է, որ Պենտագոնը Պարսից ծոցում արդեն իսկ կենտրոնացրել է ավիակիր երկու խումբ՝ «*Dwight D. Eisenhower*» և «*John C. Stennis*» ավիակիրների գլխավորությամբ: Բրիտանական ադբյուրները գրում են, որ անհրաժեշտության դեպքում նրանց կարող են միանալ «*Ronald Reagan*», «*Harry S. Truman*», «*Theodore Roosevelt*», «*Nimitz*» ավիակիրները: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ ամերիկյան ռազմուժի Կենտրոնական հրամանատարությունը, որի աշխարհագրական պատասխանատվության մեջ է մտնում նաև Մերձավոր Արևելքը, ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Տամպա Բեյ քաղաքի մոտ գտնվող «ՄըքՖիլ» ռազմաօդային բազայում տեղակայված իր կենտրոնակայանը տեղափոխելու է Կատարում գտնվող «Ալ-Ուդեյդ» ռազմաօդային բազա:

⁵ 2007թ. հունվարից Իրանի դեմ տարվում է վերջին մեկ տարվա կտրվածքով աննախադեպ տեղեկատվական ճնշման քաղաքականություն: 2007թ. հունվարի 7-ին, բրիտանական «*The Sunday Times*»-ը գրեց, որ Թեյ Ավիվը պատրաստվում է մինիմիջուկային հարվածներ հասցնել իրանական միջուկային կենտրոններին, ըստ բրիտանական մեկ այլ՝ «*The Guardian*» թերթի հունվարի 15-ի համարի, ԱՄՆ նախագահն ու Մեծ Բրիտանիայի վարչապետը նախապատրաստական լուրջ աշխատանք են տանում Իրանի դեմ պատերազմ սկսելու համար, երկու օր անց՝ հունվարի 17-ին Քուվեյթում լույս տեսնող «*The Arab Times*»-ը գրեց, որ Պենտագոնը նպատակ ունի մինչև այս տարվա ապրիլ ռազմական գործողություններ սկսել Իրանի դեմ, բրիտանական «*New Statesmen*» պարբերականի մատուցմամբ (փետրվարի 19, 2007թ.)՝ տարածաշրջանում կուտակված ամերիկյան ուժերը պատրաստ են ցանկացած պահի սկսել այդ գործողությունները (ըստ «*New Statesmen*»-ի, Պենտագոնում առկա հաշվարկների համաձայն՝ ամերիկյան ուժերը մեկ գրոհի ընթացքում կարող են միանգամից ոչնչացնել իրանական 10 հազար օբյեկտ), իսկ *BBC*-ի փետրվարի 20-ի հրապարակման համաձայն՝ Պենտագոնն արդեն հստակեցրել է ոչնչացման ենթակա իրանական միջուկային, ռազմական ու ստնեսական օբյեկտները:

ինչպես Իսրայելը»: Այդ հայտարարությունից շատ չանցած հետևեց բրիտանական «*The Sunday Times*»-ի 2007թ. հունվարի 7-ի վերոհիշյալ հրապարակումը, իսկ արդեն հունվարի 23-ին Իսրայելի Ատոմային հանձնաժողովի փոխտնօրեն Արիել Լևիտեն պաշտոնապես հաստատեց, որ իր երկիրը տիրապետում է միջուկային տեխնոլոգիաների: Եվ վերջապես, փետրվարի 11-ին իսրայելական «Խնրաթ խաշմալ» էլեկտրատեխնիկական ընկերության¹ գլխավոր տնօրեն Ուրի Բեն-Նունը հայտարարեց ատոմակայանի կառուցման հավանականության մասին, մի բան, որը նախկինում երբեք չէր քննարկվում պաշտոնական մակարդակով:

Չպետք է բացառել, որ դեռևս 20-րդ դարի կեսերից միջուկային զենք պատրաստելու կարողություններ ունեցող հրեական պետության քաղաքական ղեկավարության որոշումը՝ լեգիտիմացնել սեփական միջուկային ներուժը, իրանական զարգացումների համատեքստում կարող է նշանակել իսլամական հանրապետության դեմ հավանական ռազմական ակցիային նախապատրաստվելու Թեյ Ավիվի պատրաստակամության ու կարողությունների հրապարակում:

Մյուս կարևոր ցուցիչն է իրանական խնդրի առնչությամբ եվրոպական ազդեցիկ երկրների դիրքորոշման փաստացի փոփոխությունը:

2006թ. դեկտեմբերի 20-ին Դուբայում ունեցած ելույթի ժամանակ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը հայտարարեց, թե պետք է գիտակցել այն ռազմավարական մարտահրավերը, որը ներկայացնում է Իրանի կառավարությունը, և կոչ արեց տարածաշրջանում ձևավորել չափավոր՝ ոչ ծայրահեղական երկրների առանցք ընդդեմ Թեհրանի: Հայտնի է, որ իրաքյան կամպանիայի պատճառով բրիտանական լեյբորիստների կաբինետն առանց այդ էլ լուրջ դժվարությունների է բախվում տանը: Այդ առումով հասկանալի էր 2006թ. աշնանը իրանական հարցի առնչությամբ բրիտանական դիվանագիտության որդեգրած ավելի մեղմ դիրքորոշումը ամերիկյան կողմի գծի համեմատ: Սակայն ամբողջ հարցն այն է, որ Լոնդոնի մերձավորարևելյան քաղաքականության որոշակի մեղմացման² ֆոնին բրիտանական կառավարությունը որոշել է բացառություն անել Իրանի հարցում³: Այդ առումով ուշագրավ է, որ Իրանի դեմ տարվող տեղեկատվական-հոգեբանական ճնշման գործում գերիշխող դիրք են գրավում բրիտանական ռեսուրսները:

Առանձին ուշադրության է արժանի պաշտոնական Փարիզի որոշումը՝ հրապարակել իր նոր մոտեցումն իրանական խնդրի առնչությամբ: Հունվարի 29-ին «*The New York Times*», «*The International Herald Tribune*» և ֆրանսիական «*La Nouvel Observateur*» պարբերականներին տված հարցազրույցում Ֆրանսիայի նախագահն ուղղակի հայտարարեց. «Ո՛ր է գցելու այն [Իրանը] ատոմային ռումբը: Իսրայելի՞ վրա: Այդ ռումբը չի հասցնի թոչել 200 մետր, և Թեհրանը հողին կհավասարեցվի»: Թեև հետագայում Ելիսեյան պալատը փորձեց մեղմել Շիրակի խոսքերը, թե Ֆրանսիայի նախագահին ճիշտ չեն հասկացել, սակայն հասկանալի է, որ Փարիզը կատարեց բավական էական մի հայտարարություն:

Փոփոխության է ենթարկվել նաև Գերմանիայի դիրքորոշումը: Գերմանիայի՝ որպես Եվրամիությունում ներկայումս նախագահող երկրի, առաջարկությամբ⁴ փետրվարի 6-ին ԵՄ-ը՝ ի հավելումն 2006թ. դեկտեմբերի 23-ին ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից սահմանված պատժամիջոցների, Իրանի նկատմամբ հաստատեց լրացուցիչ պատժամիջոցներ⁵:

Ուղղակի ցուցիչների թվին պետք է դասել նաև ռուսական ու չինական կողմերի ցուցադրական ակցիաները: 2007թ. հունվարի 17-ին Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը հայտարարեց, թե ավարտվել է ռուսական «*Top-MI*» մարտավարական բնույթ ունեցող հակաօդային պաշտպանության հինգերորդ սերնդի 29 համալիրների մատակարարումը Իրանին, հունվարի 12-ին տեղի ունեցած զորավարժության ժամանակ չինական

¹ Իսրայելում այդ ընկերությունը պատասխանատու է ողջ ատոմային ոլորտի համար:

² 2007թ. փետրվարի 21-ին Թ.Բլերը հայտարարեց Իրաքում բրիտանական զորքերի կրճատման (7.100-ից մինչև 5.500) մասին:

³ Դուբայի հայտարարությունը միակը չէր: 2007թ. փետրվարի 7-ին, հանդես գալով բրիտանական Ներկայացուցիչների տանը, Բլերն ուղղակի մեղադրեց Իրանին միջուկային զենք ստեղծելու մեջ:

⁴ Գերմանական դիրքորոշման մասին կարող է վկայել նաև փետրվարի 5-ին Արաբական Միացյալ Էմիրությունների մայրաքաղաք Աբու-Դաբիում կանցղեր Անգելա Մերկելի ելույթը, որի ժամանակ նա Թեհրանին ու Դամասկոսին մեղադրեց իրավիճակը տարածաշրջանում ապակայունացնելու մեջ:

⁵ Ուշագրավ է, որ փետրվարի 16-ին Իրանի նկատմամբ պատժամիջոցներ մտցրեց նաև Ճապոնիան, որի կառավարությունն իրանական խնդրում սովորաբար աշխատում էր գերծ մնալ ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներից՝ առաջին հերթին հաշվի առնելով սեփական էներգետիկ շահերը:

հրթիռը ոչնչացրեց երկրագնդից մոտ 800կմ հեռավորության վրա գտնվող օդերևութաբանական հին արբանյակը:

Անուղղակի ցուցիչներ

Իրանական զարգացումների համատեքստում պետք է հատուկ ուշադրություն դարձնել ս.թ. փետրվարի 13-ին Պեկինում ձեռք բերված պայմանավորվածությանը, ըստ որի՝ հյուսիսկորեական կողմը փակելու է Յոնբեոնում գտնվող իր միջուկային կենտրոնը և դադարեցնելու է իր միջուկային ծրագիրը:

Տարիներ շարունակ վեցակողմ (Հյուսիսային ու Հարավային Կորեաներ, ԱՄՆ, Չինաստան, Ռուսաստան, Ճապոնիա) անարդյունք բանակցություններից հետո նման կտրուկ առաջընթացը կարող է վկայել հեռավորարևելյան քաղաքականության մեջ ինչ-որ էական նորության մասին, որի վերաբերյալ տեղեկությունները դեռ չեն հրապարկվել: Սակայն, դատելով ընդհանուր տրամաբանությունից, նորությունը պետք է որ առաջին հերթին առնչվի ամերիկա-չինական հարաբերություններին: Հաշվի առնելով իրանական հարցը և ժամանակը, երբ կայացել է այդ պայմանավորվածությունը՝ չպետք է բացառել, որ հյուսիսկորեական խնդրում Վաշինգտոնի կողմից Պեկինին արված հավանական զիջումը կարող է փոխհատուցվել հենց իրանական հարցում: Առաջին տեսանելի արդյունքը տեղեկատվական-դիվանագիտական ընդհանուր ֆոնն է՝ «Հյուսիսային Կորեան ճիշտ չէր իր միջուկային ծրագրի կապակցությամբ և հրաժարվեց այդ ծրագրից. հերթը Իրանին է»:

Անուղղակի հաջորդ ցուցիչը ամերիկա-ռուսական հարաբերությունների կտրուկ վատացումն է:

Ամերիկյան վարչակազմի կարևոր երկու պաշտոնյաներ՝ Պենտագոնի ղեկավար Ռոբերտ Գեյթսը և Ազգային հետախուզության տնօրեն Մայքլ ՄըքՔոննելը, իրենց գործունեությունը սկսում են Սառը պատերազմի ավարտից հետո հակառուսական աննախադեպ ձեռնարկներով: 2007թ. փետրվարի 1-ին ՄըքՔոննելը տեղեկացրեց, որ իր գլխավորած կառույցի ներսում՝ ի շարս Իրանի, Իրաքի, Կուբայի ու Վենեսուելայի գծով համակարգողների, ստեղծվում է նաև Ռուսաստանի գծով համակարգողի պաշտոնը: Փաստորեն, Ռուսաստանը դասվել է ԱՄՆ-ի համար առաջնային սպառնալիք ներկայացնող երկրների շարքում: Իսկ փետրվարի 8-ին ԱՄՆ պաշտպանության նոր նախարարն ուղղակի հայտարարեց, որ ամերիկյան ռազմուժը պետք է պատրաստ լինի «պայքարելու ահաբեկչության դեմ, քանի որ մենք [ԱՄՆ] չգիտենք, թե ինչ տեղի կունենա այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը, Չինաստանը, Հյուսիսային Կորեան ու Իրանը»: Ռուսաստանը պատասխանեց նախագահ Վլադիմիր Պուտինի փետրվարի 10-ին Մյունխենում ունեցած բավական կոշտ ելույթով, որի ընթացքում վերջինս մեղադրեց ԱՄՆ-ին միաբևեռ աշխարհակարգ ստեղծելու մեջ:

Ամերիկա-ռուսական հակասությունների առաջնային կետը հայտնի է՝ հետխորհրդային արեա: Սակայն այդ հակասությունների սրացումը կարող է նաև վկայել իրանական ուղղությամբ սպասվող լուրջ զարգացումների մասին:

Եվ վերջապես հարկ է ուշադրություն դարձնել Բուշեի ԱԷԿ-ի շինարարության կապակցությամբ փետրվարի 19-ին հրապարակ իջած ռուս-իրանական հակասությունների վրա: Պարզվել է, որ իրանական կողմը դադարեցրել է վճարել շինարարությունն իրականացնող ռուսական «Атомстройэкспорт» ընկերությանը՝ դժգոհելով աշխատանքների դանդաղ ընթացքից:

Հայտնի է, որ Բուշեի ԱԷԿ-ի շինարարության ընթացքը և կայանին վառելիքի մատակարարումը Մոսկվան շատ հաճախ օգտագործել է որպես ճնշամիջոց Թեհրանի նկատմամբ:

Ըստ 2006թ. սեպտեմբերին կնքված ռուս-իրանական արձանագրության՝ այս տարվա մարտից Ռուսաստանը պետք է սկսի վառելիքի մատակարարումը Բուշեի ԱԷԿ-ին, ինչը կարող է մեկ անգամ ևս հետաձգվել ստեղծված իրավիճակի պատճառով: Ռուս-իրանական ի հայտ եկած այդ հակասությունը, թերևս, վկայում է ոչ այնքան հերթական ակցիայի, որքան իրանական խնդրին առնչվող սպասվելիք զարգացումների վերաբերյալ կողմերից առնվազն մեկի մոտ գոյություն ունեցող մտահոգությունների մասին:

Հետևություն

Իրանական խնդրի առնչությամբ ընթացող զարգացումներում տեղի է ունեցել տրամաբանության փոփոխություն:

Եթե նախկինում խնդրի լուծման ռազմական ուղին կարճատև ու, թերևս, միջնաժամկետ հեռանկարում քիչ հավանական էր թվում նաև Վաշինգտոնում, ապա հավանական ռազմական գործողությունների մասին այսօրվա արտահոսքերը պետք է դիտել որպես ավելի փաստարկված:

Իրանական վերնախավը շարունակում է միջուկային զենք ունենալը դիտարկել որպես ազգային անվտանգության ապահովման առաջնային գործոն և, որն ավելի կարևոր է, այդ ուղղությամբ տարվող Թեհրանի քաղաքականությունն առաջիկայում դժվար թե էական փոփոխություններ կրի: Հետևաբար, Իրանի շուրջ ծավալվող զարգացումների առումով պետք է նախ և առաջ հաշվի առնել միջուկային զենք ստեղծելու Իրանի իրական կարողությունները:

ԱՄՆ-ում ու եվրոպական ազդեցիկ երկրներում ամրագրված է այն մտտեցումը, որ միջուկային Իրանը ոչ այնքան կազդի ուժերի տարածաշրջանային փոխդասավորվածության վրա, որքան կփոխի տարածաշրջանում գոյություն ունեցող անվտանգության համակարգի էությունը՝ զգալիորեն սահմանափակելով Արևմուտքի ազդեցությունն էներգակիրներով հարուստ Մերձավոր Արևելքում¹ և հետևաբար հանգեցնելով գլոբալ խնդիրների:

Հիմնական եզրակացություններն են.

- որքան Իրանը մոտենա միջուկային զենքի ստեղծմանը, այնքան կմեծանա ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների կողմից Իրանի նկատմամբ ռազմում լի կիրառման հավանականությունը,
- այսինքն՝ մեծ է հավանականությունը, որ ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցները կհարվածեն Իրանին նախ և առաջ այն պարագայում, եթե իրոք Թեհրանը տիրապետի անհրաժեշտ մակարդակի ու ծավալի միջուկային զենքի,
- հետևաբար, ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների կողմից իսլամական հանրապետության նկատմամբ ռազմում լի կիրառելու համար չափանիշ է ընդունվում ոչ թե Իրաքում առկա իրավիճակը, այլ միջուկային զենք ստեղծելու Թեհրանի պատրաստակամությունն ու կարողությունները:

Եթե այս հետևությունը ճիշտ է, ապա առաջիկայում իրավիճակը Հայաստանի հարավային հարևանի շուրջ պետք է որ զգալիորեն սրվի:

*Մարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ*

¹ Ընդ որում՝ այդ համատեքստում որպես օրինակ բավական լուրջ են ընդունվում լիբանանյան զարգացումները:

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2007թ. սկիզբը Պաղեստինյան ինքնավարությունում նշանավորվեց միջպաղեստինյան բախումների ակտիվացմամբ, որոնք ընթանում էին չափավոր «Ֆաթհ»¹ և առավել ծայրահեղական «Համաս»² կազմակերպությունների կողմնակիցների միջև: Փետրվարի 5-ի տվյալներով՝ հակամարտող կողմերի միջև դաժան բախումների արդյունքում սպանվել էր ավելի քան 27 և վիրավորվել 230-ից ավելի մարդ: Միայն հունվար ամսվա ընթացքում չեղյալ էր հայտարարվել Պաղեստինում զինադադարի հաստատման 9 համաձայնագիր, այդ թվում նաև՝ Դամասկոսի ակտիվ միջամտությամբ կնքված:

Ստորև փորձել ենք ուրվագծել 2007թ. սկզբին Պաղեստինյան ինքնավարությունում ընթացող զարգացումները, ինչպես նաև դրանց պատճառներն ու անդրադարձը՝ հատկապես պաղեստինա-իսրայելյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վրա, որ ներկայումս ընթանում է միջազգային «քառյակի»՝ ԱՄՆ, Ռուսաստան, Եվրոպական Միություն և ՄԱԿ, հովանու ներքո:

Ռազմական բախումներ «Ֆաթհ» և «Համաս» խմբավորումների միջև

Դեռևս այս տարվա հունվար ամսին միջպաղեստինյան բախումների դադարեցման և ինքնավարությունում խաղաղության հաստատման ուղղությամբ ակտիվ քայլեր ձեռնարկեց Սիրիան: Պատահական չէ, որ հունվարի 13-ին ժամանակավորապես Դամասկոսում բնակվող «Համասի» քաղաքական ղեկավար Խալեդ Մաշալի հետ հերթական բանակցությունների համար Սիրիա ժամանեցին Պաղեստինյան ինքնավարության և «Ֆաթհի» նախագահ Մահմուդ Աբասի բանագնացները՝ ինքնավարության օրենսդիր ժողովի անկախ պատգամավոր Զահիդ Աբու Ամրը և Մուհամեդ Ռաշիդը, ով ՊԱԿ-ի նախկին ղեկավար Յասեր Արաֆատի խորհրդականն էր:

Հանդիպման ընթացքում ձեռք բերվեցին նախնական համաձայնություններ, որոնք արդեն հունվարի 21-ին քննարկվեցին Աբասի և Մաշալի հանդիպման ընթացքում: Կողմերը պայմանավորվեցին հետագա 2 շաբաթվա ընթացքում ավարտել ազգային միասնության կառավարության կազմավորման համար նախատեսվող բանակցությունները, ինչը միտված էր միջպաղեստինյան բախումների դադարեցմանն ու Պաղեստինում խաղաղության վերահաստատմանը:

Սակայն Դամասկոսում ընթացող բանակցություններն այդպես էլ չնպաստեցին ինքնավարությունում կրակի վերջնական դադարեցմանը: Հունվարի 27-28-ին «Համասի» և «Ֆաթհի» կողմնակիցների միջև բախումները նոր թափ ստացան: Հատկապես դաժան բախումներ էին տեղի ունենում Ղազա քաղաքում, որն աստիճանաբար նմանվում էր Բաղդադին:

Բախումների հաջորդ օրը՝ հունվարի 29-ի երեկոյան, Իսրայելում վերջին մի քանի ամիսների ընթացքում առաջին անգամ իրականացվեց ահաբեկչական գործողություն: Պա-

¹ 1960-ականների սկզբին պաղեստինցի ազգայնականների առաջին խմբակները, որոնք ստեղծվել էին դեռևս 1950-ականների վերջին, Իսրայելի հարևան արաբական երկրներում ձեռնամուխ եղան գաղտնի կազմակերպությունների ձևավորմանը: Հենց այդ շրջանում էլ կազմավորվեց «Ֆաթհը»՝ «Պաղեստինի ազգային ազատագրության շարժումը»: Ապագա կազմակերպության կորիզը կազմում էր ուսանողների խումբը, որ ղեկավարում էր Յասեր Արաֆատը:

² «Համասը» պաղեստինյան իսլամական շարժում է, որ կազմավորվել է 1987թ. Հորդանան գետի Արևմտյան ափին՝ շեյխ Ահմադ Յասինի գլխավորությամբ: 1988թ. հրապարակվեց շարժման ծրագիրը, որը ներառում էր Իսրայելի ոչնչացման և Պաղեստինի տարածքում իսլամական պետության կազմավորման դրույթներ: Որոշ տվյալների համաձայն՝ իսրայելյան «Մոսադ» հետախուզական ծառայությունն ակտիվ մասնակցություն է ունեցել «Համասի» կազմավորման գործընթացում: Շարժման ստեղծումը նպատակ էր հետապնդում հակակառուցիկ ստեղծել Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը (ՊԱԿ) և թուլացնել վերջինիս դիրքերն ու ազդեցությունը պաղեստինցիների շրջանում: Սակայն կազմավորումից կարճ ժամանակ անց այն դուրս եկավ իսրայելական վերահսկողությունից՝ վերջինիս դեմ պայքարում նախապատվությունը տալով առավել ծայրահեղական մեթոդներին:

դեստինյան գրոհայինները պայթյուն իրականացրին իսրայելական Էյլաթ հանգստավայրում՝ Կարմիր ծովի ափին: Ամենայն հավանականությամբ ահաբեկչական գործողությունը նպատակ ուներ շեղել «Ֆաթհի» և «Համասի» ուշադրությունը միջպաղեստինյան հակամարտությունից և այն կրկին կենտրոնացնել արտաքին թշնամու՝ Իսրայելի դեմ պայքարի վրա:

Փետրվարի 4-ին Ղազայում հարձակում իրականացվեց Մահմուդ Աբասի նստավայրի վրա¹: Կրակահերթի արդյունքում, որի համար «Ֆաթհը» մեղադրեց «Համասի» ղեկավարությանը, զոհեր չկային: Հակամարտության ընթացքում համասականներն իրենց վերահսկողությունը հաստատեցին Ղազայի հատվածի անցակետերի նկատմամբ, ինչը ռազմավարական տեսանկյունից ամրապնդեց նրանց դիրքերը:

Բախումների այդ շղթան սկսվեց դեռևս փետրվարի 1-ի երեկոյան, երբ համասականներն Ալ-Բուրեյջ արվարձանում հարձակում իրականացրին ինքնավարության նախագահական գորամիավորման մարտիկների ուղեկցությամբ անցնող մեքենաների վրա: «Համասի» ղեկավարությունը փաստարկեց, որ մեքենաները տեղափոխում էին զենք՝ նախատեսված «Ֆաթհի» ծրագրած հեղաշրջման համար²: Հարձակման արդյունքում նախագահական գորամիավորումը կորցրեց 5 մարդ:

Ի պատասխան «Ֆաթհի» մարտիկները գրոհեցին Ղազայում Իսլամական համալսարանը, որը «Համասի» հենակետերից է: «Ֆաթհի» տվյալներով՝ համալսարանում հայտնաբերվեց «Կասսամ» հրթիռների արտադրության արհեստանոց, ինչպես նաև գրեթե 1.500 հրաձիգ:

«Ֆաթհը» տեղեկացրեց, որ ձերբակալվել է Իրանի 7 քաղաքացի, որոնք աշխատել էին «Համասի» մարտիկների պատրաստման ռազմական դպրոցում:

Հակամարտության ընթացքում «Համասի» մարտիկներն ակտիվորեն օգտագործում էին շարժմանը բնորոշ գերիներ վերցնելու գործելաճր: Փետրվարի 4-ին գերի վերցվեց Ղազայում «Ֆաթհի» ամենաազդեցիկ ղեկավարներից մեկի՝ Մուհամեդ Դահլանի զարմիկը: «Ֆաթհի» ներկայացուցիչները պնդում են, որ համասականներն արդեն գերի են վերցրել շուրջ 40 մարդ:

Չարգացումները Պաղեստինում. Իսրայելի դիրքորոշումը

Պաղեստինում ստեղծված իրավիճակը լուրջ մտահոգություն է առաջացրել Իսրայելում: Անհանգստության հիմնական պատճառն այն է, որ միջպաղեստինյան բախումները կրկին կարող են նպաստել հակաիսրայելյան ահաբեկչության բռնկմանը: Ինչպես պնդում էր իսրայելյան «Haaretz» թերթը՝ իրադարձությունների որոշակի զարգացման դեպքում՝ «Համասի» հնարավոր հաղթանակի և Ղազայում վերջինիս միանձնյա վերահսկողության հաստատման պայմաններում, Իսրայելը, նաև չափավոր «Ֆաթհին» աջակցություն ցույց տալու նպատակով, նախատեսում էր ռազմական գործողության իրականացում ինքնավարության տարածքում:

Ինչպես նշում է իսրայելյան *Debka* ինտերնետային կայքը, հաշվի առնելով լիբանանյան փորձը՝ զինվորականները Ղազայի հատվածում հնարավոր որևէ գործողություն իրականացնելու պարագայում առաջին անգամ նախատեսում են իսրայելական բնակչության ամբողջությամբ տեղահանում սահմանային շրջաններից: Դա առաջնահերթ վերաբերում է Մդերոտ քաղաքին, որը գտնվում է Ղազայի հետ անմիջական սահմանի մոտ և կարող է դառնալ հարմար թիրախ պաղեստինյան գրոհայինների համար:

«Համասը» դեռևս չի հրաժարվել Իսրայելի ոչնչացման գաղափարից, ուստի նրա հաղթանակը հղի է մի շարք հետևանքներով՝ ինչպես Իսրայելի անվտանգության, այնպես էլ տարածաշրջանում խաղաղության հաստատման տեսանկյունից: «Համասը» կարող է վիժեցնել «Ֆաթհի» և Իսրայելի միջև նախկինում հաստատված ժամանակավոր զինադադարը:

¹ Դեռևս հունվարի կեսին Պաղեստինի անվտանգության ուժերը Ղազայի հատվածում հայտնաբերել էին մեծ քանակությամբ պայթուցիկներ, որոնք տեղադրված էին ստորգետնյա թունելներում: Դրանք անցնում են Ղազայի հատվածի գլխավոր մայրուղիների տակով, և նրանցից հիմնականում օգտվում են Պաղեստինյան ինքնավարության ղեկավարները: Պայթուցիկների հայտնաբերումից անմիջապես հետո «Ֆաթհի» ղեկավարությունը մահափորձ իրականացնելու մեջ մեղադրեց «Համաս» շարժմանը, որը 2006թ. հունվարի ընտրություններում հաղթանակ տանելուց հետո ձևավորեց կառավարություն: Համասականները ժխտում էին իրենց հասցեին ուղղված մեղադրանքները՝ փաստարկելով, որ թունելներում հայտնաբերված պայթուցիկները նախատեսված են Ղազայի հատված իսրայելյան զորքերի հերթական հնարավոր ներխուժման համար:

² «Համասի» տվյալների համաձայն՝ զենքը Օղջի արաբական երկրներից հասցվել էր եգիպտական Նուբեյդ նավահանգիստ, իսկ այնտեղից էլ՝ Պաղեստինյան ինքնավարություն:

«Մեքքայի համաձայնագիրը»

